ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃԸՆ **ՀԱՄԱՅՆՔ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

28 ԱՊՐԻԼԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 12 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Ավետիսյանը, Անի Գալստյանը, Հովհաննես Գասպարյանը, Արտյոմ Գեվորգյանը, Անի Իսպիրյանը, Թովմաս Հովհաննիսյանը, Էմմա Մարգարյանը, Վարդան Պապյանը, Նարեկ Ստեփանյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Տաթեվիկ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով՝ Նոր Հաճընն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի հերթական թիվ 4 նիստի հետևյալ օրակարգը.

1.Նոր Հաճընն համայնքի ղեկավարի հաղորդումը 2023 թվականի բյուջեի 1 -ին եռամսյակի կատարման մասին:

2.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28- ի N 140- Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

3.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15- ի N 120- Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

4.Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում փոփոխութուն կատարելու մաասին:

5. Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղիի Կառլեն Հրանտի Առաքելյանի անվան մանկապարտեզի տանիքի վերանորոգման ծրագրի համֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին:

6.Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

7.Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

8.Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

9.Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին

10.Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին

11.Նոր Հաճըն համայնքի << Նոր Հաճընի համայնքապետարանի մշակույթի տուն» , <<Նոր Գեղիի Ց. Մ. Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությաների և Նոր Հաճըն համայնքի Արգել, Քանաքեռավան գյուղերի մշակույթի տների դահլիճների ժամանակավոր օգտագործման համար գանձվող վարձակալական վճարի սահմանման մասին

12.Նոր Հաճըն համայնքի հերթական նիստի գումարման օրը սահմանելու մասին

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 35-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1- ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, պահանջներով՝ Նոր Հաճընի համայնքի ավագանին,
լսելով համայնք 2023 թվականի չորրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2023 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 36_Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի <Նոր Հաճըն համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին> N 140-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշմամբ հաստատված NN 2, 3 և 6 հավելվածներում կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ն/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 120-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի 34 –րդ հոդվածի պահանջներով, Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1.Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 15-ի <<Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և դրույքաչափերը հաստատելու մասին » N 120- Ա որոշման հավելվածում կատարել փոփոխություն: 2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի 1-6 հավելվածների (հավելվածները կցվում են):

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 39_Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ԳԵՂԻՒ ԿԱՌԼԵՆ ՀՐԱՆՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԱՆԻՔԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով <<Դեպի Առաջ >> ԲՀԿ նախագահ Ս.Ամիրյանի 2023 թվականի ապրիլի 17-ի գրությունը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Փարոս հիմնադրամի կողմից հիմնադրված <<Դեպի Առաջ>> Բարեգործական ՀԿ-ի ծրագրի շրջանակներում Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղիի Կառլեն Հրանտի Առաքելյանի անվան մանկապարտեզի տանիքի ամբողջական վերանորոգմանը, որի իրականացման համար համայնքի բյուջեից հատկացնել համաֆինանսավորում 3 000 000 ՀՀ դրամի չափով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40_Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 143 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի մարտի 23-ի թիվ 1/փ-74 եզրակացությունը և համաձայն սեփականատերեր Ավետիք Բենիկի Ավետիսյանի դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Ավետիք Բենիկի Ավետիսյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան վերջիններիս սեփականություն հանդիսացող 07-064-0353-0343 կադաստրային ծածկագրով 0.32718հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք /0.09055հա/, վարելահող /0.17613հա/, արոտավայր /0.0605հա/ հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2.Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Քաղաքաշինության մասին օրենքի 143 հոդվածի 5-րդ կետի , Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասին 29 կետի , ՀՀ Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 12-ի թիվ 1/փ-99 եզրակացությունը և համաձայն սեփականատեր Գևորգ Օհաննեսի Չափարյանի դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1. Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը, բավարարել քաղաքացի Գևորգ Չափարյանի դիմումը և Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի գլխավոր հատակագծին համապատասխան վերջիններիս սեփականություն հանդիսացող 07-025-0205-0105 կադաստրային ծածկագրով 0.0411հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ:

2.Հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոխված հողամասի կադաստրային արժեքի տարբերությունը վճարելուց հետո:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով <<Հողային օրենսգրքի>> 7-րդ հոդվածի 15-րդ կետի, <<Քաղաքաշինության մասին>> օրենքի 143 հոդվածի 12-րդ կետի և համաձայն սեփականատիրոջ դիմումի Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Նոր Հաճըն համայնքի Գետամեջ գյուղի վարչական տարածքում գտնվող, սեփականության իրավունքով Լիիթ Գևորգի Մանուկյանին պատկանող 07-025-0203-0045 կադաստրային ծածկագրով 0.4358հա գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողերի, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական ծանուցմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Նոր Գեղի գյուղի բնակիչ Կարինե Վաղարշակի Պետրոսյանի դիմումը՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի գյուղի Երկրաբանների փողոցի 2-րդ շենքի թիվ 33 բնակարանը /սեփականության իրավունքի վկայական 21032023-07-0061, ծածկագիր 07-048-0054-0127-001-033/ 32.8քմ մակերեսով անժամկետ, անհատույց օգտագործման տրամադրել Կարինե Վաղարշակի Պետրոսյանին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Նոր Գեղի գյուղի բնակիչ Նիկոլայ Յուրիի Խոնգարյանի դիմումը՝ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հավանություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը Նոր Հաճըն համայնքի Նոր Գեղի գյուղի Երկրաբանների փողոցի 2-րդ շենքի թիվ 22 բնակարանը /սեփականության իրավունքի վկայական 20032023-07-0025, ծածկագիր 07-048-0054-0127-001-022/ 28.6քմ մակերեսով անժամկետ, անհատույց օգտագործման տրամադրել Նիկոլայ Յուրիի Խոնգարյանին

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՔԱՂԱՔԻ «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ>>,<ՆՈՐ ԳԵՂԻԻ Ց. Մ.ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ > ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՐԳԵԼ, ՔԱՆԱՔԵՌԱՎԱՆ ԳՅՈՒՂԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՆԵՐԻ ԴԱՀԼԻՃՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԳԱՆՁՎՈՂ ՎԱՐՁԱԿԱԼԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է՝

1.Նոր Հաճըն համայնքի<< Նոր Հաճընի համայնքապետարանի մշակույթի տուն» և <<Նոր Գեղիի Ց. Մ. Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությաների դահլիճները ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար՝ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ: 1) Համայնքային, ինչպես նաև հերոս ազատամարտիկների հիշատակին նվիրված միջոցառումների համար << Նոր Հաճընի համայնքապետարանի մշակույթի տուն» և <<Նոր Գեղիի Ց. Մ. Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությաների դահլիճները դահլիճները տրամադրել անվճար:

2.Նոր Հաճըն համայնքի Արգել, Քանաքեռավան գյուղերի մշակույթի տների դահլիճները ժամանակավոր օգտագործման տրամադրման դեպքում սահմանել վարձակալական վճար մեկ օրվա համար՝ 50000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ: 1) Համայնքային, ինչպես նաև հերոս ազատամարտիկների հիշատակին նվիրված միջոցառումների համար Նոր Հաճըն համայնքի Արգել, Քանաքեռավան գյուղերի մշակույթի տների դահլիճները տրամադրել անվճար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի, Նոր Հաճընհամայնքի ավագանին որոշում է՝

1.Նոր Հաճընհամայքի ավագանու հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի մայիսի -ը՝ ժամը :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Ավագանու անդամներ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՍԱՀԱԿ ԳՅՈՒԼԻՆՅԱՆ

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

ՍՈՖԻԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԳՈՌ ՄԵԾՈՅԱՆ

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՆԱՐԻՆԵ ՕԶՆԵՑՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արման Սմբատյանը